ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Արաբա-թուրքական հարաբերությունները Մերձավոր Արևելքի նորագույն շրջանի ամենաբարդ ոլորտներից մեկն են: Դա ունի իր պատճառները՝ ինչպես պատմական, այնպես էլ արդիական՝ քաղաքական, այդ թվում և աշխարհաքաղաքական-ծավալապաշտական, տնտեսական, կրոնական և այլն:

Արաբները մոտ 400 տարի՝ 1516-1918թթ., եղել են Օսմանյան կայսրության կազմում, որն անջնջելի հետք է թողել թե՝ արաբների, և թե՝ թուրքերի պատմական հիշողության մեջ: Արաբները հիանալի հիշում են չորսդարյա թուրքական զուլումի պատմական ժամանակահատվածը և իրավացիորեն թուրքական տիրապետությանը մեղադրում արաբների սոցիալ-տնտեսական և մշակութային-գիտական հետամնացության մեջ: Նրանց հիշողության մեջ դեռևս թարմ են Դամասկոսում, Բեյրութում, Երուսաղեմում ե Ալեյում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան կառավարչների կանգնեցրած կախաղանները, որոնց վրա ճոճվում էին արաբական ազգային-ազատագրական՝ հակաթուրքական պայքարի բազմաթիվ առաջնորդների դիակները: Արաբ ժողովուրդը չի մոռացել դա և չի ներել երիտթուրքական առաջնորդներ Թալեաթին, Էնվերին և Ջեմալին, այն նույն դահիճներին, որոնք կազմակերպեցին հայոց ցեղասպանությունը՝ արմենոցիդը, այդ նույն ժամանակաշրջանում[1]:

Արաբների վրա օսմանյան չորսհարյուրամյա տիրապետությունը խոր հետք է թողել նաև թուրքերի պատմական հիշողության մեջ: Նրանք չեն մոռացել նրանց համար այդ "երանելի" պատմական ժամանակահատվածը, երբ նրանք տեր ու տնօրեն էին արաբական աշխարհում, որը կորցնելով, Թուրքիան դադարեց Օսմանյան կայսրություն լինելուց և վերածվեց Փոքր Ասիայի տարածքում կազմավորված Թուրքական հանրապետության: Եվ այդ պատմական հիշողությունը ստեպ-ստեպ դրսևորվում է թուրքական կառավարող շրջանակների մոտ, մանավանդ տա-

բածաշրջանում քաղաքական լարվածության կամ ճգնաժամի առաջացման ժամանակ: Մյուս կողմից. երկարամյա տիրապետությունը արաբների վրա թուրքերի մոտ առաջացրել է որոշակի հոգեբանական բարդույթ: Նրանք վարժվել են արաբների վրա ավանդաբար նայել վերևից, մեծ դժվարությամբ են համակերպվում թուրքերի արաբների հետ իրավահավասարության հիմնաղրույթին, շատ հաճախ կրկին հավակնում են նրանց դիտել իրենց- ենթակա մի ժողովուրդ, որն ապրում է նախկինում "իրենց պատկանած" տարածքներում, և այլն:

Ահա այս հողի վրա թուրքական իշխանությունները, հետապնդելով իրենց ծավալապաշտական նպատակները, պարբերաբար հանդես են գալիս արաբական երկրների նկատմամբ տարածքային հավակնություններով և պահանջներով:

Թուրքիան և նրա նոր ղեկավարները՝ Մուստաֆա Քեմալը և նրա հետևորդներ համարվող քեմալականները, արաբական երկրների նկատմամբ տերիտորիալ պահանջներով հանդես եկան արդեն 1919-1920թթ., չնայած այն հանգամանքին, որ Օսմանյան կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գլխովին ջախջախվեց, կրեց խայտառակ պարտություն և անհետացավ պատմության թատերաբեմից. որն արձանագրվել էր առաջին միջազգային պաշտոնական դիվանագիտական փաստաթղթում՝ 1918թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարի վերաբերյալ փաստաթղթում, իսկ այնուհետև 1920թ. Սևրի պայմանագրում: Այդ և հետագա պայմանագրերով (Լոզանի և այլն) վերացվում էր օսմանյան տիրապետությունը արաբական երկրներում:

Բայց ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, թուրքական ղեկավարությունը, մի կողմից ստորագրում էր համաձայնագրեր ու պայմանագրեր արաբական երկրների վրա Թուրքիայի տիրապետությունից հրաժարվելու վերաբերյալ, իսկ մյուս կողմից, գործադրելով զանազան հնարանքներ, փորձում էր կրկին վերադառնալ արաբական աշխարհ՝ որպես նրա տիրակալ:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից շատ չանցած, բավականին լարված հարաբերություններ ստեղծվեցին երեկվա դաշնակիցներ արաբների և անգլիացիների ու ֆրանսիացիների միջև: Արաբները, որոնք ապստամբվել էին օսմանյան տիրապետության դեմ 1916թ. հունիսին Հիջազի կառավարիչ Հուսեյնի գլխավորությամբ, և մեծ ավանդ ներդրել օսմանյան բանակների ջախջախման ու անգլո-ֆրանսիական ուժերի հաղթանակի գործում, պատերազմի ավարտից հետո չստացան այն, ինչ նրանց խոստացել էին Անգլիան և Ֆրանսիան, հատկապես սանկախության հարցում: Դա, բնականաբար, առաջացրեց արաբների խորը դժգոհությունը: Հուսեյնի և Անգլիայի, հատկապես Ֆրանսիայի միջև հարաբերությունները բավականին սրվեցին:

Այդ իրադրությունից փորձեցին օգտվել Մուստաֆա Քեմալը և Թուրքիայի մյուս պետական ու ռազմական գործիչները: Նրանք դեռևս չէին հրաժարվել թուրքական մեծապետական իմպերիալիստական ծրագրերից և փայփայում էին Օսմանյան կայսրության սահմանները, եթե ոչ ամբողջապես, ապա գոնե մասամբ վերականգնելու ծրագրեր: Այդ ծրագրերի մեջ նրանք առանձնահատուկ տեղ էին հատկացնում Անդրկովկասի և Արաբական Արևելքի երկրների գրավմանը:

Քեմալական գործակալները լայն գործունեություն էին ծավալել Սիրիայում, հատկապես Հալեբում և նրա շրջակա տարածքներում, Դամասկոսում և այլ վայրերում, գրգռելով տեղական արաբ բնակչությանը անգլիացիների ու ֆրանսիացիների դեմ: Նրանց գործունեության համար այդ շրջանում ստեղծվել էր որոշ նպաստավոր հող, քանի որ, ինչպես նշվեց, արաբների մոտ խոր զայրույթ էր կուտակվել Անգլիայի ու Ֆրանսիայի դեմ, որոնք խաբել էին նրանց անկախության հարցում և ձգտում էին իրենց տիրապետությունը հաստատել արաբական երկրներում: Արաբ որոշ գործիչներ, հուսահատությունից ու անզորությունից, երբեմն դիմում էին չմտածված ու անխոհեմ քայլերի: Դրանց թվին էին պատկանում Հալեբի նահանգապետ Ջաֆար ալ-Ասկյարին, Յասին ալ-Հաշիմին և ուրիշներ, որոնք նույնիսկ կապեր հաստատեցին ու բանակցությունների մեջ մտան քեմալականների հետ: Նրանք դրանով փորձում էին պատժել իրենց եվրոպական բարեկամներին՝ Անգլիային ու Ֆրանսիային:

Քեմալականները փորձեցին օգտվել այդ հանգամանքից և անգլիացիների ու ֆրանսիացիների դեմ ուղղված արաբների դժգոհությունը ծառայեցնել իրենց շահերին: Դա դարձավ քեմալականն գործակալների գործունեության գլխավոր ուղղությունը և նրանց կողմից արաբական երկրներում տարածվող զանազան գրավոր ու բանավոր կոչերի հիմնական բովանդակությունը: Այդ առումով առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում քեմալականների երկու կոչերը:

Առաջին կոչը, որ 1919թ. հոկտեմբերի 10-ին տարածվեց Հալեբում, կոչվում էր "Մուստաֆա Քեմալի կոչը սիրիացիներին": Մուստաֆա Քեմալը կոչ էր անում արաբներին միանալ թուրքերին՝ ընդդեմ եվրոպական պետությունների: Կոչում ներկայացվում էր նաև Եվրոպայի դեմ արաբների ու թուրքերի միավորման հիմքը: Դա կրոնն էր՝ իսլամը: Քեմալը դիմում էր արաբներին որպես նույն կրոնին պատկանող մարդ: "Որպես կրոնակից, - ասում էր Քեմալը, - ես աղաչում եմ ձեզ ուշադրություն չդարձնել այն տարաձայնությունների վրա, որ ծագել էին մեր միջև և որոնք բաժանեցին մեզ"[2]: Նա առաջարկում էր վերջ տալ թյուրիմացություններին և զենքը ուղղել դավաճան կուսակցությունների դեմ, որոնք ցանկանում են մեր երկիրը բաժանել: "Եթե դուք չլսեք, - ընդգծում է Քեմալը, - ապա կափսաուսք: Հույս մի դրեք մեր կրոնի անհավատ թշնամիների

խոստումների վրա"[3]: Մուստաֆա Քեմալը կոչ է անում սիրիացիներին՝ "եկեք ապրենք որպես կրոնակից եղբայրներ"[4]:

Քեմալը այստեղ, ինչպես ընդունված էր այդ ժամանակ. սիրիացիներ ասելով նկատի ուներ ոչ սիսյան բուն սիրիացիներին. այլև լիբանանցիներին. պաղեստինցիներին և հորդանանցիներին:

Հուշից պարզ երևում է, որ Քեմալը և քեմալականները չէին ուզում տեսնել թուրքական լծից ազատագրվելու հասար արաբների մղած դաժան պայքարի իրական սրստճառները և, հետևաբար, չէին ընդունում այդ պայքարի օրինական լինելը: Նրանք այդ պայքարը, այդ թվում և արևելյան մեծ ապստամբությունն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, համարում էին թյուրիմացության արդյունք: Մյուս կողմից, քեմալականները արաբների և թուրքերի միավորման հիմք ստեղծում էին կրոնը և արաբների ազատագրական պայքարին ձգտում էին տալ կրոնական բնույթ, միամտաբար համոզված լինելով, որ դրա լավագույն ոգունգն է արաբներին իրենց կողմը գրավելու և նրանց վրա իրենց տիրապետությունը վերահաստատելու տեսանկյունից: Այլ քեմալականները ձգտում էին Սիրիան և արաբական մյուս երկրները կրկին դնել թուրքական լծի ներքո, ցայտուն կերպով երևում է առաջին կոչի հետևյալ հատվածից, որտեղ արաբական երկրները դիտվում էին որպես Թուրքիայի անբաժան մաս: Դիմելով սիրիացիներին, Քեմալն ասում է. "Եկեք բարդրս մեր զենքերն ուղղենք դավաճան կուսակցությունների դեմ, որոնք ուզում են մեր երկիրը տրոհել"[5]:

Այս հատվածն ուշագրավ է երկու առումով՝ Քեմալի քաղաքականությունն արաբների նկատմամբ ճիշտ հասկանալու համար: Նախ, նոր արաբական երկրները և Թուրքիան համարում է մի երկիր, օգտագործելով "մեր երկիրը" ձևակերպումը: Հասկանալի է, որ "մեկ երկիրը" չէր կարող լինել արաբական, այլ դա թուրքական երկիր էր լինելու: Դա Թուրքիան էր. որը, ելնելով նոր իրադրությունից. ամենայն հավանականությամբ, այլևս չէր կոչվելու Օսմանյան կայսրություն, անգամ ընդհանրապես կայսրություն: Նույնիսկ դա կարող էր կոչվել Թուրքական հանրապետություն: Բայց դրանից ոչինչ չէր փոխվում, քանի որ այդ "երկրում" տիրապետողը լինելու էր թուրքական տարրը:

Երկրորդ, Քեմալն անընդհատ օգտագործում է "դավաճան կուսակցություններ" բառակապակցությունը, պահանջելով զենքն ուղղել նրանց դեմ: Չենք կարծում, թե նա նկատի ուներ երիտթուրքերի կուսակցությունը. որն այդ ժամանակ արդեն կրճատի էր մատնված: Ուստի մնում է ենթադրել, որ Քեմալը նկատի ուներ արաբական այնպիսի կուսակցությունները, ինչպես Լամարքազիան՝ Ապակենտրոնացման կուսակցությունը, "Ալ-Ահդը", "ալ-Ֆաթաթը" և այլն, որոնք մեծ հեղինակություն էին վայելում արաբական երկրներում, և հոդ նախապատրաստեցին օսմանյան տիրապետության դեմ արաբական մեծ ապստամբության համար:

Ուրեմն Քեմալի հարվածի սլաքն ուղղված էր արաբական ազգային-հայրենասիրական ուժերի և նրանց կազմակերպությունների դեմ, որոնց դավաճան համարելը նշանակում էր, թե ինչպիսի քաղաքական նպատակներ էին հետապնդում քեմալականները՝ կոչ անելով արաբներին միանալ թուրքերին և իրենց զենքն ուղղել արաբական ազգային-հայրենասիրական ուժերի դեմ, որոնք քաղաքական ասպարեզ էին իջել արաբական երկրները օսմանյան բռանտիրությունից ազատագրելու օգյեկտիվ պահանջից:

Արաբական երկրների վրա Թուրքիայի տիրապետությունը վերականգնելու քեմալականների մտադրությունն ավելի հստակ ու որոշակիորեն է ելևում արաբներին ուղղված Քեմալի երկրորդ կոչում: Քեմալն ի լուր արաբների հայտարարում է. "Մենք ցանկանում ենք, հակառակ Վիլսոնի սկզբունքների, միացնել այն մասերը (իմա՝ տերիտորիաները - Ն.Հ.), որոնք պատկանում են Թուրքիային"[6]:

Քեմալն առանց այլևայլության հստակ հայտարարում է, որ արաբական երկրները, Օսմանյան կայսրության այլ տարածքների հետ միասին, պատկանում են Թուրքիային: Իր վերոհիշյալ ձևակերպումով նա այդ հարցում այլևս կասկածի տեղ չի թողնում: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ նա ուղղակիորեն հակադրվում է ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի դեռևս 1917թ. հռչակած 14 կետերին, որի 12-րդ - կետում արձանագրված էր, որ Օսմանյան կայսրության նախկին տիրապետությունները, այդ թվում և արաբական, պետք է ինքնորոշման իրավունք ստանան և այլևս չմնան օսմանյան տիրապետության ներքո:

Քեմալականներն այժմ հանդես էին գալիս այդ կարևոր պահանջի դեմ: Այդ պատճառով էլ նրանք, ինչքան էլ որ փորձեցին գունազարդվել և արաբական ժողովուրդների բարեկամի դիմակ հագնել, միևնույն է, չկարողացան խաբել և ապակողմնորոշել արաբներին: Դա եղավ թուրքական ծավալապաշտական ծրագրերի ձախողման գլխավոր պատճառը:

Իր վճռական նշանակությունն ունեցավ նաև Հիջազի արդեն թագավոր հռչակված Հուսեյն թագավորի և նրա զինակիցների շատ հստակ և որոշակի բացասական դիրքորոշումը քեմալականների և նրանց քաղաքական նկրտումների նկատմամբ: Հուսեյնը կտրուկ հանդես եկավ քեմալականների հետ կապեր հաստատելու և բանակցությունների մեջ մտնելու արաբական որոշ գործիչների, հատկապես Հալեբի նահանգապետ Ջաֆար ալ-Ասկյարիի փորձերի դեմ: Այդ մասին է վկայում 1919թ. երկրորդ կեսին իր որդուն՝ Ֆեյսալին, որը տնօրինում էր սիրիական գործերը, ուղարկված նրա հեռագիրը: Հուսեյնը նրանց զգուշացնում է. "Հաստատ է, որ մարդիկ Հալեբից հյուսիս-արևմուտք բանակցություններ են վարում Քեմալ փաշայի հետ: Դու պետք է հասկանաս, թե ինչ կարող է լինել դրա հետևանքը"[7]: Նա կարգադրում է Ֆեյսալին հայտնել բոլոր նրանց, ում վերաբերում է, չմոռանալ իր՝ Հուսեյնի, խորհուրդները, և ան-

տեսելով իր ահազանգները, սխալներ չգործել: Հուսեյնը հայտնում է, որ ինքն այդ մասին մի քանի անգամ նախազգուշացրել է Ջաֆար Ասկյարիին[8]:

Հուսեյնը, Ֆեյսալը և նրանց գլխակիցները գիտակցում էին, որ Քեմալի իշխանության տարածումը Սիրիայի և արաբական մյուս երկրների վրա կնշանակեր թուրքական տիրապետության վերականգնում և արաբական երկրների անկախության գաղափարի ու հեռանկարների կործանում: Հասկանալի է, որ նրանք չէին կարող համաձայնվել դրա հետ և շարունակեցին պայքարը արաբական երկրների ազատության ու անկախության համար:

Քեմալականների փորձերը, նրանց քարոզչական արշավանքը, իսլամի օգտագործումը որպես արաբների ու թուրքերի "միավորման" հիմք, ոչ մի արձագանք չգտան արաբների՝ ժողովրդի և քաղաքական առաջնորդների մոտ, և լիակատար ձախողում կրեցին:

* * *

Քեմալական Թուրքիայի տերիտորիալ հավակնության հաջորդ նշանակակետը դարձավ Իրաքը, ավելի կոնկրետ՝ Մոսուլի վիլայաթը, որի համար նա պայքարում էր 1920-ական թվականներին, ընդհուպ մինչև 1926թ.:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, Անգլիան Ազգերի լիգայից ստացավ Իրաքի կառավարման մանդատը, որն Իրաքում իրագործվեց միանգամայն յուրահատուկ կերպով: Ստեղծվեց Իրաքի թագավորություն, որը, սակայն, գաղութային կախվածության մեջ էր գտնվում Մեծ Բրիտանիայից: Իրաքն ունեցավ իր թագավորը, կառավարությունը, պառլամենտը և պետական այլ կառույցներ, սակայն, այնտեղ գործում էր անգլիական գլխավոր կոմիսարը, որին և պատկանում էր վերջին խոսքը: Անգլիական մանդատի ներքո իրաքյան թագավորության վերջնական կազմավորումն ավարտվեց 1921թ. օգոստոսին:

Այս գործընթացն այնքան էլ հեշտ ու խաղաղ չընթացավ: Իրաքի թագավորի թեկնածու Մեծ Բրիտանիան առաջարկում էր Հիջազի թագավորի երրորդ որդուն՝ Ֆեյսալին, որն աչքի ընկնող դերակատարում էր ունեցել արաբական մեծ ապստամբության նախապատրաստման և իրականացման գործում և ղեկավարել էր արաբական բանակի ռազմական գործողությունները թուրքերի դեմ Սիրիայում: Նա ճանաչված քաղաքական գործիչ էր և մեծ հեղինակություն էր վայելում արաբական շրջանակներում: Չնայած այդ հանգամանքին, Իրաքի գահին հավակնում էին նաև այլ մարդիկ, որոնց թվում և թուրքական իշխան Բուրխան ադ-Դինը[9]: Անգլիացիներին հաջողվեց ստիպել նրան և մյուս հավակնորդներին հանել իրենց թեկնածությունները և Ֆեյսալը մնաց միակ հավակնոր-

րը: Նրա պաշտոնական բազմությունը կայացավ 1921թ. օգոստոսի 23-ին:

Իրաքի թագավորությունը կազմավորվեց երեք վիլայեթների՝ Բասրայի, Բաղդադի և Մոսուլի, միավորման հիմքի վրա:

Սակայն դրա դեմ հանդես եկավ քրդերի մեծամասնությունը, որը դեմ էր նաև Ֆեյսալի թեկնածությանը որպես Իրաքի թագավոր: Այդ կապակցությամբ անցակցված հարցման ժամանակ քրդերը կամ դեմ քվեարկեցին Ֆեյսալին, կամ էլ կողմ քվեարկելով՝ արեցին վերապահումներ: Մոսուլում և Էրբիլում քրդերը քվեարկեցին հօգուտ Ֆեյսալի, բայց պահանջեցին հատուկ իրավունքներ իրենց համար. Սուլեյմանիայում քրդերը հրաժարվեցին մասնակցել քվեարկությանը, իսկ Կիրկուկում նրանք դեմ քվեարկեցին և պահանջեցին քրդերի համար ստեղծել քրդական կառավարություն: Միաժամանակ Կիրկուկի քրդերը Սուլեյմանիայի հետ միանալու դեմ արտահայտվեցին: Ընդհանուր առմամբ քրդերի մեծամասնության դիրքորոշումը Ֆեյսալի հարցում բացասական էր[10]: Ինչպես նշում է ֆրանսիական պատմաբան Պ. Ռոսին, "Քրդերը հայտարարեցին, որ իրենք չեն ենթարկվելու արաբներին"[11]:

Քրդերի դիրքորոշման պատճառով Մոսուլի վիլայեթում ստեղծվեց լարված իրադրություն, որը 1922թ. վերածվեց ապստամբության: Դրանից փորձեց օգտվել քեմալական Թուրքիան: Նրա գործակալները և հատուկ էմիսարները որոշակի դերակատարում ունեցան քրդական հուզումները բորբոքելու և նրանց արաբների դեմ գրգռելու գործում:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է ուշադրությունն հրավիրել հետևյալ հանգամանքի վրա:

1920թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագրով քրդերին իրավունք էր վերապահվում ստեղծել իրենց պետությունը՝ Եփրատից արևելք և Հայաստանի սահմաններից հարավ ընկած տարածքում: Այդ կապակցությամբ պայմանագրում ասված էր, որ " եթե Մոսուլի քրդերը ևս կցանկանան մտնել նոր քրդական պետության կազմի մեջ, ապա գլխավոր դաշնակիցները չեն առարկի դրա դեմ"[12]: Սևրի պայմանագրի դեմ, ինչպես հայտնի է, հանդես եկավ Թուրքիան: Ըստ որում, նա ոչ միայն ընդհանրապես դեմ էր այդ պայմանագրին, այլև դեմ էր քրդերի՝ իրենց ինքնուրույն պետությունն ունենալու որոշմանը:

Թուրքիան ձգտում էր Մոսուլն անջատել Իրաքից:

Հետապնդելով այդ նպատակները, Թուրքիան ամեն ինչ անում էր, որպեսզի քրդական շրջաններում անհանգիստ իրավիճակ լիներ: Այդ պատճառով քրդական շրջաններում հայտնվում էին ոչ միայն քեմալական գործակալներ, այլև թուրքական զինված ջոկատներ: Այդ հանգամանքը նկատի ունենալով, որոշ հետազոտողներ, ինչպես Մ.Սետոն-Վիլյամսը և Է. Մեյնը, այն կարծիքն են արտահայտել, որ քրդերի 1922-

1924թթ. երույթները օտարերկրյա, տվյալ դեպքում թուրքական միջամտության արդյունք էին:

Քրդական երույթները սկսվեցին 1922թ. գարնանը: 1922թ. մարտի 17-ին թուրքական կառավարությունը Ռևանդուզ որպես կայմակամ՝ կառավարիչ, ուղարկեց իր հավատարիմ գործակալներից մեկին՝ Ռամզի բեյին: Դա բացահայտ միջամտություն էր Իրաքի ներքին գործերին, որը հնարավոր եղավ իրականացնել երկու պատճառով: Նախ, Թուրքիան հաշվի չէր նստում Իրաք սպետության ստեղծման փաստի հետ, որը թեկուզ և անգլիական մանդատի ներքո էր գտնվում, այդուհանդերձ, պետություն էր: Նա չէր հաշտվում այն իրողության հետ, որ Մոսուլի վիլայաթը Իրաքի բաղկացուցիչ մասն էր, և փորձում էր այն դիտել որպես նախկին Օսմանյան կայսրության մի մասը, այն կայսրության, որի իրավահաջորդն էր նա փորձում հանդես գալ: Այնպես ինչպես բացատրել այն փաստը, որ Թուրքիայի կառավարությունն իրեն իրավունք էր վերապահում կառավարիչ նշանակել մեկ այլ պետության տարածքում գտնվող շրջանում:

Երկրորդ, Թուրքիան տեխնիկապես կարողացավ իրագործել այդ աննախադեպ քայլը, քանի որ այդ ժամանակ պետական սահմանների պաշտպանությունը չէր գտնվում այնպիսի բարձրության վրա, ինչպես մեր օրերում է: Եվ դա հնարավորություն էր ստեղծում պետական սահմանները համեմատաբար ազատ տեղափոխությունները: Ասվածն առավել բնորոշ էր Իրաքի համար, որը դեռևս թույլ էր և զորկ համապատասխան միջոցներից ու հնարավորություններից փակի տակ պահել իր սահմանները:

Ռամզի բեյը, ժամանելով Ռևանդուզ և ստանձնելով կայմակամի պաշտոնը, կապեր հաստատեց քրդական ցեղերի հետ և նրանց շրջանում լուրեր տարածեց, թե շուտով Մոսուլ կժամանեն խոշոր թուրքական զինված ուժեր, "որոնց օգնությամբ Սուլեյմանիան, Կիրկուկը և Էրբիլը կխլվեն բրիտանացիներից"[13]:

Թուրքիայից ժամանեց և Ռամզի բեյին միացավ նաև մեկ այլ թուրքական գործիչ՝ Ալի Շուֆիկը, որն ավելի շատ հայտնի էր Յոզ Դեմիր՝ "Երկաթյա ուս" մականունով: Նա ժամանեց որպես "ազգային ապստամբության ղեկավար": Յոզ Դեմիրը հայտարարեց, որ նրա գլխավոր նպատակն ամբողջ Մոսուլի վիլայաթի գրավումն է[14]:

Քրդական ապստամբության ժամանակ, թուրքական զորքերը մեկ անգամ չէ, որ անցնում էին Իրաքի սահմանը և մասնակցում անգլիացիների դեմ ուղղված ռազմական գործողություններին: 1922թ. օգոստոսին, երբ ապստամբեց քրդական փիժդար ցեղը, թուրքական զինված ջոկատները անցան թուրք-իրաքյան սահմանը և միանալով ապստամբ փիժդարյան ցեղին, ռազմական գործողություններ ծավալեցին անգլիացիների դեմ

Ռանիյայի մոտ: Անգլիացիները հայտնվեցին ծանր դրության մեջ և նահանջեցին այդ քաղաքից"[15]:

Ստեղծված ծանր պայմաններում, անգլիական իշխանությունները հարկադրված էին որոշ զիջումներ կատարել քրդերին և փակել Թուրքիայի միջամտության խողովակները: Նրանց համաձայնությամբ ստեղծվեց քրդական կառավարություն Սուլեյմանիյաում շեյխ Մահմուդի գլխավորությամբ: Սակայն վերջինս բնավ մտադիր չէր կուրորեն հետևել Իրաքում անգլիական իշխանությունների և գլխավոր կոմիսար Պերսի Կոկսի հրամաններին: Նա իր սեփական խաղն ուներ: 1922թ. նոյեմբերին շեյխ Մահմուդն իրեն հայտարարեց"Քրդստանի թագավոր" և փորձեց իր իշխանությունը տարածել Իրաքի բոլոր քրդական շրջանների վրա: Միաժամանակ նա ուղղակի կապեր հաստատեց քեմալականների հետ: Անկարայից շեյխ Մահմուդին այցելեցին թուրքական բանակի երկու սպաներ, որոնք խոստացան նրան օգնել ու աջակցել Մեծ Բրիտանիայի դեմ ուղղված նրա պայքարում[16]: Թուրքերն իրենց զորքերը կենտրոնացրին Զախոյից և Զազիրա ալ-Ումարից մի քանի մղոն հեռավորության վրա: Դա նպաստեց թուրքամետ գաղտնի կոմիտեների գործունեության ակտիվացմանը Մոսուլի վիլայաթում[17]:

Այդ նույն ժամանակ, 1922-1923թթ., ընդմիջումներով, ընթանում էր Լոզանի կոնֆերանսը, որի նիստերից մեկի ժամանակ թուրքական պատվիրակության ղեկավար, Մուստաֆա Քեմալի մերձավոր զինակից Իսմեթ փաշան, պահանջեց ամբողջ Մոսուլի վիլայաթը մտցնել Թուրքիայի կազմի մեջ: Անգլիան, հասկանալի է, դեմ էր քեմալականների պահանջին և ամեն կերպ ցանկանում էր Մոսուլի վիլայաթը պահել Իրաքի կազմում՝ ձգտելով Մոսուլի վիլայաթի հյուսիսային սահմանները դարձնել Իրաքի հյուսիսային սահմանները:

Անգլիան շտապում էր իր ծրագիրն իրագործել մինչև Լոզանի կոնֆերանսի ավարտը: Իսկ դրա համար անհրաժեշտ էր հանդարտեցնել քրդական շրջանները և իրեն ենթարկել շեյխ՝ Մահմուդին, հակառակ պարագայում, կարող էր այն տպավորությունը ստեղծվել, որ Իրաքի կառավարությունն ի վիճակի չէ իր վերահսկողության տակ պահել Մոսուլի վիլայաթը:

Պայքարը Մոսուլի վիլայաթի համար կարևոր նշանակություն ուներ երկու կողմերի համար էլ: Անգլիան ոչ մի կերպ չէր կարող նավթաբեր շրջաններով հարուստ այդ վիլայաթը զիջել որևէ պետության: Բացի դրանից, Մոսուլի վիլայաթն ուներ կարևոր ստրատեգիական նշանակություն Անգլիայի համար, որի գաղութային տիրույթները կազմում էին մի ամբողջ շղթա, որի կարևոր օղակներից մեկն էր դարձել Մոսուլի վիլայաթը:

Թուրքիայի համար Մոսուլը նույնպես կարևոր էր թե՛ տնտեսական, և թե՛ ստրատեգիական առումով: Թուրքիան չէր կարողանում հաշտվել

այն մտքի հետ, որ հարկադրված է սահմանափակվել հիմնականում Փոքր Ասիայի շրջանակներով: Մոսուլի գրավումը նրան հնարավորություն կտար դուրս գալ Միջագետք և բարելավել իր ստրատեգիական և աշխարհաքաղաքական դիրքերը Մերձավոր Արևելքում:

Անգլիան անցավ վճռական ռազմական գործողությունների և կարողացավ ճնշել քրդերի ապստամբությունը: Նրանք 1923թ. ապրիլին թուրքերից ազատագրեցին Ռևանդուզը, իսկ մայիսի 28-ին մտան Սուլեյմանիա, ապա նաև մյուս ապստամբական կենտրոններ:

Այսպիսով, Թուրքիան չկարողացավ, օգտագործելով քրդերի պայքարն իրենց դրության բարելավման և իրավունքների ընդլայնման համար, և ուղղակի ռազմական միջամտությամբ տիրանալ Մոսուլի վիլայաթին:

Սակայն դա դեռևս չէր նշանակում, որ Թուրքիան վերջնականապես հաշտվել էր Մոսուլի կորուստի հետ և մտադիր չէր այլևս պայքարը շարունակելու:

Պայքարն շարունակվեց, բայց նա ռազմական ոլորտից տեղափոխվեց իրավական ոլորտ: Այդ հարցը դարձավ Ազգերի լիգայի քննարկման առարկա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրաքի կառավարման մանդատն Անգլիային տվել էր նա և դրա հետ կապված հարցերը ենթակա էին նրա իրավասությանը:

Այդ հարցի ուսումնասիրության համար Ազգերի լիգան 1924թ. ստեղծեց հատուկ հանձնաժողով, որին Անգլիան և Թուրքիան ներկայացրին իրենց հուշագիրը, ձգտելով հիմնավորել իրենց պահանջների իրավական լինելը: Ուսումնասիրելով այդ հուշագրերը, հարցի պատմությունը և կողմերի վաստակները, Ազգերի լիգայի հանձնաժողովն ընդունեց որոշում հօգուտ Անգլիայի, այսինքն Մոսուլի վիլայաթը համարել Իրաքի բաղկացուցիչ մաս և թողնել այն նրա կազմում: Նա համաձայնություն տվեց այսպես կոչված "Բրյուսելյան գծին", ըստ որի Մոսուլի վիլայաթը մտնում էր Իրաքի կազմի մեջ և նրա հյուսիսային սահմանները դառնում էին սահմաններ Իրաքի և Թուրքիայի միջև:

Սակայն հանձնաժողովը երկու նախապայման դրեց Անգլիայի առջև: Առաջին, Մոսուլի վիլայաթը համարել Ազգերի լիգայի մանդատի ներքո 20 տարի ժամանակով, և, երկրորդ, երաշխավորել քրդական բնակչության իրավունքները: Անգլիան համաձայնվեց հանձնաժողովի այս երկու պայմանների հետ:

Հանձնաժողովը 1925թ. իր որոշումը ներկայացրեց Ազգերի լիգայի Խորհրդի հաստատմանը:

Սակայն Թուրքիան վիճարկում էր Ազգերի լիգայի իրավասությունը տվյալ խնդրի վերաբերյալ որոշում կայացնելու կապակցությամբ: Ազգերի լիգայի իրավասության հարցը հանձնվեց Հաագայի միջազգային դատարանին: Վերջինս 1925թ. նոյեմբերի 21-ին տվեց իր եզրակացությունն՝

ան այն, որ Ազգերի լիգան իրավասու է որոշում ընդունել Մոսուլի վիլայաթի վերաբերյալ:

Հաագայի միջազգային դատարանի այդ եզրակացության հիման վրա, Ազգերի լիգայի Խորհուրդն ընդունեց որոշում, որի համաձայն Մոսուլի վիլայաթը դարձավ Իրաքի բաղկացուցիչ մասը՝ մանդատի ժամկետը 25 տարով երկարացնելու և ոչ արաբ բնակչության իրավունքները ապահովելու պայմանով:

Անգլիան ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ միասին ստիպեցին Թուրքիային ճանաչել Ազգերի լիգայի որոշումը Մոսուլի վիլայաթի վերաբերյալ: 1926թ. հունիսի 5-ին Անկարայում Անգլիայի, Իրաքի և Թուրքիայի միջև ստորագրվեց համապատասխան պայմանագիր, որի համաձայն կողմերը ճանաչեցին, որ "սահմանը Թուրքիայի և Իրաքի միջև վերջնականապես հաստատվում է Ազգերի լիգայի Խորհրդի կողմից 1924թ. հոկտեմբերի 29-ին հաստատված գծին (այսպես կոչված Բրյուսելի գծին) համապատասխան"[18]: Կողմերը համաձայնվեցին նաև սահմանը փոփոխելու փորձեր չկատարել, հրաժարվել կապեր հաստատելուց մյուս պետության ցեղերի ղեկավարների, շեյխերի և այլ անդամների հետ, որոնք տվյալ պահին գտնվում են մյուս պետության տարածքում և այլն: Իրաքը պարտավորվեց 20 տարի Թուրքիային վճարել նավթից ստացվող եկամուտների 10 տոկոսը:

Այսպիսով, քեմալական Թուրքիայի այս փորձը՝ տիրանալ արաբական տարածք համարվող Մոսուլի վիլայաթին, ավարտվեց անհաջողությամբ: Սակայն դա անհետևանք չանցավ: Դա ցույց տվեց արաբներին, ինչպես և Սիրիայի դեպքում, որ Թուրքիան դեռևս հրաժեշտ չի տվել իր ոչ հեռավոր անցյալի քաղաքական մտածելակերպին, կայսերական նկրտումներին և ծավալապաշտական քաղաքականության և արաբական երկրների վրա նայում է, որպես իր հնարավոր ագրեսիայի ամենահարմար նպատակակետերից մեկը:

* * *

Արաբական երկրների տարածքների նկատմամբ իր ագրեսիվ և զավթողական նկրտումները Թուրքիան կրկին անգամ ցուցադրեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Դա արդեն թվով երրորդ ոտնձգությունն էր, որ Թուրքիան դրսևորում էր արաբական երկրների տերիտորիաների նկատմամբ: Նախորդ երկուսը, ինչպես ցույց տրվեց, տեղի ունեցավ Քեմալի ղեկավարության շրջանում, իսկ այս երրորդը նրա մահվանից հետո, Իսմեթ Ինենյուի պրեզիդենտության շրջանում, այն Իսմեթի, որը դեռևս 1923թ. Լոզանի կոնֆերանսում պահանջեց Մոսուլի վիլայաթն ամբողջությամբ միացնել Թուրքիային: Թուրքիայի ղեկավարությունն իր ձեռքն էր վերցրել Քեմալի գործի հավատարիմ շա-

բունակողը, մի անձնավորություն, որն այդեն քաղաքական փորձ ուներ արաբական տարածքների Թուրքիային բռնակցելու պահանջներ ներկայացնելու հարցում:

Այս անգամ ևս Թուրքիայի տերիտորիալ պահանջները բացահայտորեն հասցեագրված էին Սիրիային, իսկ սքողված կերպով նաև Իրաքին:

Թուրքիան նրկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ձևականորեն չեզոք դիրք էր գրավել: Իրականում նա, կախված ռազմական իրադրությունից և հակամարտող կողմերի՝ ֆաշիստական բլոկի և հակահիտլերյան կոալիցիայի, պատերազմի դաշտում հաջողություններից կամ պարտություններից, մերթ մերձենում էր այս, մերթ այն բլոկին՝ հետապնդելով իր սեփական ռազմաքաղաքական նպատակները: Պատերազմի առաջին փուլում, երբ հաջողությունն ուղեկցում էր ֆաշիստական բլոկին, Թուրքիան սիրախաղում էր Գերմանիայի հետ և փորձում նրս օգնությամբ լուծել իր համար կենսական նշանակություն ունեցող մի շարք հարցեր, այդ թվում և Արաբական Արևելքում:

Իսկ դրությունն ստրատեգիական մեծ նշանակություն ունեցող այս տարածաշրջանում, խիստ տագնապալի էր, մանավանդ այն բանից հետո, երբ Ֆրանսիան 1940թ. պարտություն կրեց և անձնատուր եղավ Գերմանիային: Այդ իրողությունն առաջին հերթին անդրադարձավ Սիրիայի և Լիբանանի իրավիճակի վրա, որոնք համարվում էին ֆրանսիական ենթամանդատային երկրներ: Օգտվելով Ֆրանսիայի կապիտուլյացիայից Լևանտում մտադրվեց հաստատվել Գերմանիան, ինչպես նաև Իտալիան:

Ահա օգտվելով այս նոր քաղաքական իրողություններից և այն հանգամանքից, որ Ֆրանսիան պարտություն էր կրել և այլևս նախկին հզոր տերությունը չէր, կրկին իր տերիտորիալ պահանջներով ասպարեզ իջավ Թուրքիան: Նա փորձեց դա իրագործել Գերմանիայի թույլտվությամբ և համաձայնությամբ, օգտագործելով այն պարագան, որ Ֆրանսիայի կապիտուլյացիայից հետո խիստ սրվեցին հարաբերությունները երկու նախկին դաշնակիցների՝ Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Անգլիան չէր կարող թույլ տալ, որ Ֆրանսիայի պարտությունից հետո Սիրիայում և Լիբանանում հաստատվի Գերմանիան՝ առանձին, կամ Իտալիայի հետ միասին: Ուստի նա, բնականաբար, ցանկանում էր իր վերահսկողությունը սահմանել ֆրանսիական այդ երկու ենթամանդատային երկրների վրա և կանխել գերմանական ուժերի ներխուժումը Սիրիա և Լիբանան: Անգլիական այդ ծրագրերի դեմ վճռականորեն հանդես էին գալիս հիտլերյան Գերմանիայի հետ համագործակցող և նրա կամակատար Ֆրանսիայի այսպես կոչված վիշիական ղեկավարությունը՝ Պետենը, Լավալը, Վեյգանը, Դառլանը և մյուս գործիչները: Նրանց այդ դիրքորոշումը, հասկանալի է, լրիվ աջակցություն էր գտնում հիտլերյան Գերմանիայի ղեկավարության կողմից:

Ամեն ինչ վկայում էր այն մասին, որ հասունանում էր նոր ռազմական կոնֆլիկտ՝ մի կողմից Անգլիայի և նրա հետ համագործակցող "Ազատ Ֆրանսիայի", որի ղեկավարն էր գեներալ դը Գոլլը, իսկ մյուս կողմից Սիրիայում և Լիբանանում Պետենին հավատարիմ մնացած ֆրանսիական ուժերի միջև, որոնց թիկունքում կանգնած էր Գերմանիան:

Թուրքիայի ղեկավարությունը մտածեց, որ հասունացել է հարմար պահը իր տերիտորիալ պահանջները ներկայացնել Սիրիայի նկատմամբ: Այդ մասին են վկայում գերմանական պաշտոնական փաստաթղթերը, որը պատերազմից հետո հրատարակեցին ԱՍՆ-ը և Անգլիան "Գերմանական արտաքին քաղաքականության փաստաթղթերը" ("Documents on German Foreign Policy") խորագրով: Դրա մասին նյութեր են պարունակում նաև "Միացյալ Նահանգների արտաքին հարաբերությունները: Դիվանագիտական նյութեր" ("Foreign Relations of the United States. Diplomatic Papers") մատենաշարի հատորները:

Թուրքիան բանակցությունների մեջ մտնելով գերմանական կառավարության հետ, բացահայտ կերպով դնում էր Սիրիան զավթելու հարցը:

1941թ. հունիսի 3-ին Անկարայում գերմանական դեսպան ֆոն Պապենը հայտնում է Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ռիբբենտրոպին իր զրույցի մասին, որ նա ունեցել էր Թուրքիայի արտաքին գործերի նախարար Սարաջօղլուի հետ: Վերջինս զրույցի ընթացքում բարձրացնում է Սիրիայի հարցը: Սարաջօղլուն նշում է, որ Թուրքիան վախենում է, որ Անգլիան կարող է գրոհել Սիրիայի վրա, որը "Թուրքիային կարող է դնել Բաղդադի երկաթուղին և Հալեբի շրջակա տերիտորիաները գրավելու անհրաժեշտության առջև՝ իր դիրքերի ստրատեգիական պաշտպանության համար"[19]: Ֆոն Պապենի հետ հետագա հանդիպումների և զրույցների ընթացքում, Սարաջօղլուն արդեն պնդում է ոչ միայն Հալեբի և նրա շրջանների, այլև ամբողջ Սիրիայի օկուպացման վրա[20]:

Այսպիսով, Թուրքիան կրկին բացահայտորեն հույս է ներկայացնում Սիրիան զավթելու վերաբերյալ: Նա չի թաքցնում իր զավթողական մտադրությունները նաև Իրաքի նկատմամբ, քանի որ Բաղդադի երկաթուղու գրավումը Թուրքիայի կողմից անպայմանորեն կշոշափեր նաև Իրաքի տարածքային հարցը:

1941թ. հուլիսի սկզբներին Անկարայում էր գտնվում Ֆրանսիայի վիշիական կառավարության, որը հիտլերյան Գերմանիայի խամաճիկն էր, պետական քարտուղար բարոն Ժակ Բենուա-Սեշինը: Նրա այցի նպատակն էր բանակցություններ վարել թուրքական կառավարության հետ թուրքական տերիտորիայով Սիրիա ֆրանսիական զորքեր և ռազմական տեխնիկա տեղափոխելու վերաբերյալ: Գտնվելով Անկարայում, նա սերտորեն համագործակցում էր գերմանական դեսպանի հետ: Վերջինս

1941թ. հուլիսի 4-ին Բեռլին ուղարկված իր դիվանագիտական հերթական զեկուցագրում նշում էր, որ թուրքական կառավարությունը ֆրանսիական բարոնին ընդունել էր բավականին սառը:

Այդ նույն օրը, հուլիսի 4-ին Սարաջողլուն նորից է հանդիպում ֆոն Պապենի հետ և նրա հետ դարձյալ քննարկում Թուրքիայի տերիտորիալ պահանջները բավարարելու հարցը: Իր պահանջներն ավելի "հիմնավորելու" և համոզիչ դարձնելու նպատակով. Թուրքիայի արտաքին գործերի նախարարը ֆոն Պապենին և նրա միջոցով Գերմանիայի կառավարությանն իր կասկածն է հայտնում առ այն, որ ֆրանսիացիները հագիվ թե կարողանան իրենց դիրքերը պահել Սիրիայում և այդ պատճառով հնարավոր է, որ նրանք, այսինքն ֆրանսիացիները, համաձայնվեն "Թուրքիային վստահել Սիրիայի հոգատարությունը": Շարունակելով իր "հիմնավորումները", Սարաջողլուն տեղյակ է պահում ֆոն Պապենին, որ "Այդ դեպքում Թուրքիան կարող էր անհապաղ նախապատրաստվել Սիրիան օկուպացնելու համար, ֆրանսիական բանակին հնարավորություն կտար պատվով հեռանալու և պատերազմի ավարտից հետո Սիրիան կվերադարձներ Ֆրանսիային, բացառությամբ հյուսիսային շրջանի"[21]:

Ահա այսպիսին էին Թուրքիայի պահանջները: Նա կրկին ցույց էր տալիս, որ Թուրքիայում այդպես էլ չէին մոռացել և չէին հաշտվել արաբական երկրների կորուստի հետ, թեև դրանից հետո անցել էր ավելի քան 20 տարի: Մյուս կողմից ակնհայտ էր այն էժանագին խորամանկությունը, որ դրսևորում էր թուրքական ղեկավարությունը՝ թաքնվելով ֆրանսիացիների հոգատար "բարեկամների" դիմակի տակ և առաջարկելով մի այնպիսի ծիծաղաշարժ առաջարկություն, ինչպես սկզբում գրավել ամբողջ Սիրիան, իսկ հետո ֆրանսիացիներին ետ վերադարձնել նրա մի մասը: Այստեղ Թուրքիան փորձում էր խաղացնել Ալեքսանդրետի սանջաքի տարբերակը: Մենք նկատի ունենք այն հանգամանքը, երբ Թուրքիան շանտաժի միջոցով կարողացավ 1939թ. ստիպել Ֆրանսիային Թուրքիային զիջել Սիրիայի մի մասը հանդիսացող Ալեքսանդրետի սանջաքը, որը մտնում էր Հալեբի նահանգի մեջ: Ֆրանսիան, լինի Պետենի ղեկավարության տակ գտնվող հատվածը, թե գեներալ դը Գոլլի "Ազատ Ֆրանսիան", չէր կարող համաձայնվել թուրքական առաջարկության հետ, քանի որ նրանք լավ գիտեին, ելնելով Ալեքսանդրետի սանջաքի փորձից, որ եթե թուրքական զինվորը մտնի Սիրիա, ապա նա կամավոր կերպով այնտեղից չի հեռանա:

Այդ պատճառով էլ, երբ ֆոն Պապենը թուրքական վերոնշյալ առաջարկությունը փոխանցեց բարոն Ժակ Բենու-Մեշինին, ապա նա կատեգորիկ կերպով մերժեց այն, ընդգծելով, որ թուրքական առաջարկությունն անընդունելի է Ֆրանսիայի համար[22]:

Նրա հետ լրիվ համաձայն էր գերմանական դեսպան ֆոն Պապենը, որն այդ կապակցությամբ նշում է, որ Սիրիան Թուրքիայի խնամակալության ներքո ավելի պակաս ընդունելի է Գերմանիայի համար, քան թե Սիրիան անգլիացիների ձեռքում[23]:

Այդուհանդերձ, Թուրքիան շարունակում էր պնդել Սիրիան գրավելու վրա և ձգտում ձեռք բերել Գերմանիայի համաձայնությունը: Հուլիսի 9-ին ֆոն Պապենը հաղորդում է Ռիբբենտրոպին, որ Սարաջօղլուն կրկին հանդիպել է իր հետ և նորից պահանջել Գերմանիայի համաձայնությունը գրավել Սիրիան մինչև Աբու Քեմալ-Տրիպոլի նավթամուղի գիծը: Պապենը խնդրում է հետագա հրահանգներ այդ հարցի կապակցությամբ[24]:

Երեք օր անց, 1941թ. հունիսի 12-ին ֆոն Պապեն ստանում է Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ռիբբենտրոպի հետևյալ բովանդակությամբ հեռագիրը. "Մեզ համար հնարավոր չէ գրավել նպաստավոր դիրքորոշում հյուսիսային Սիրիան գրավելու թուրքական պահանջների նկատմամբ"[25]: Արտաքին գործերի նախարարը իր երկրի դիրքորոշումը հիմնավորում էր, նշելով թե Ֆրանսիան ամբողջ ժամանակ լոյալ է եղել Գերմանիայի նկատմամբ, և եթե այժմ Գերմանիան պաշտպանի Թուրքիային, ապա դա ոչ լոյալ ակտ կլինի Ֆրանսիայի հանդեպ[26]:

Գերմանիայի հրաժարվելը պաշտպանել Թուրքիայի պահանջները Սիրիան օկուպացնելու հարցում, հիարկե, բացատրվում էր այլ պատճառներով: Նացիստական Գերմանիան միջազգային հարաբերությունների երբեք չի ղեկավարվել բարոյական վեհ սկզբունքներով: Սիրիայի լրիվ կամ մասնակի օկուպացումը Թուրքիայի կողմից չէր համապատասխանում Գերմանիայի շահերին: Ահա այս էր գլխավոր պատճառը: Գերմանիան չէր կարող համաձայնվել, որ Սիրիան սկզբունքի վրա մատուցվեր Թուրքիային, որը ոչ մի կրակոց անգամ չէր արձակել Ֆրանսիային պարտության մատնելու համար: Ֆրանսիայի դեմ պատերազմի և նրա պարտության ամբողջ ծանրությունը կրել էր Գերմանիան, և նրա համար անհասկանալի էին թուրքական նկրտումները:

Գերմանիան չպաշտպանեց Թուրքիայի հավակնությունները Սիրիան գրավելու հարցում և թուրքական կառավարությանը չհաջողվեց իրականացնել իր զավթողական ծրագրերը: Այդուհանդերձ, այդ ծրագրերի ձախողման գլխավոր պատճառը հանդիսացան անգլիական և "ազատֆրանսիական" զորքերի հարձակողական գործողությունները, որոնք սկսվեցին 1941թ. հուլիս 8-ին և հաջողությամբ ավարտվեցին մեկ ամսվա ընթացքում: Նրանք Սիրիայից և Լիբանանից դուրս մղեցին վիշիական զորքերին: "Ազատ Ֆրանսիան" գեներալ Դը Գոլլի գլխավորությամբ իր հսկողությունը սահմանեց Սիրիայի և Լիբանանի վրա:

Ստեղծվեց ռազմաքաղաքական նոր իրադրություն, երբ Գերմանիան և Թուրքիան այլևս անելիք չունեին Լևանտի երկրներում:

Այսպիսի վախճան ունեցավ արաբական երկրների տարածքներից ինչ-որ բան պոկելու Թուրքիայի երրորդ խոշոր փորձը:

Սակայն չպետք է կարծել, թե դրանով ավարտվեցին Թուրքիայի սպառնալիքները արաբական երկրներին, առաջին հերթին Սիրիային և Իրաքին: Թուրքիան ռազմական գործողություններ սանձազերծելու սպառնալիքներով անցյալ դարի երկրորդ կեսին փորձել է զանազան առիթներով ճնշում գործադրել կամ միջամտել Սիրիայի և Իրաքի ներքին գործերին: Հիշենք թեկուզ թուրքական զորքերի հաճախակի ներխուժումները Հյուսիսային Իրաք վերջին 15 տարիների ընթացքում՝ քրդական շարժումները ճնշելու պատրվակով և այլն:

Թուրքիան դիմելով նման քայլերի, արաբական երկրների տարածքներից ինչ-որ բան փախցնելու իր ցանկությունները փորձում է ներդաշնակել տարածաշրջանային գերտերությանը դեր կատարելու իր քաղաքական շատ հեռուն գնացող նպատակների հետ, որը մեծ սպառնալիք է ներկայացնում ոչ միայն արաբներին, այլև անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի բոլոր երկրներին և ժողովուրդներին:

NIKOLAY HOVHANNISYAN

ON THE TERRITORIAL CLAIMS OF TURKEY TOWARDS ARAB COUNTRIES IN THE NEWEST PERIOD

The Arab-Turkish relations are one of the complicated fields of the Middle Eastern geopolitical realities of the newst period. It has its reasons-historical, political, including geopolitical, economic, religious, etc.

The Arab countries were more than 400 years under the Ottoman domination. Despite the crush of the Ottoman Empire in 1918, the new Turk leaders, coming to power under the head of Mustafa Kemal, did not give up the idea of restauration of their domination over Arab countries, in particular on Syria and Iraq. This policy of Kemalists represented great danger to the independence of Arabs and became a permanent source of strained relations between Arab countries and Turkey.

The author elucidates in this article three main attempts of Turkey in 1919-1920, 1921-1926 and 1941 to occupy Syria and Iraq and to incorporate them in Turkey. He studies this problem in the context of international relations, taking into account not only the position of Arabs, but also the Great Britain, France, the United States of America and Germany.

The Turkish policy pursuing the occupation of some Arab territories had been failed. The Arab countries and peoples rejected all attempts of Turkey again to put them under the Turkish yoke.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանրամասն տես՝ Հովհաննիսյան Ն.. Արաբական երկրների պատմություն. հ. II. Արաբական երկրները օսմանյան տիրապետության ներքո. 1516-1918թթ., Երևան, 2004թ.
2. Documents on British Foreign Policy. 1919-1939. First Serics, vol. IV, London, 1952, p. 478.
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում, էջ 568:
7. Նույն տեղում, էջ 553:
8. Նույն տեղում:
9. Оганесян Н.О. Национально-освободительное движение в Ираке (1917-1958гг.), Ереван, 1976, с. 180.
10. Աբդ ալ-Ռազակ ալ-Հասանի. Թարիխ ալ-Իրաքի աս-սիյասի ալ-հաղիս: Հ. 2, Սայդա, 1957, էջ 32 (արաբերեն):
11. Rossi P. L'Irak des revoltes, Paris. 1962, p. 102.
12. Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. 3, вып. 2, Москва, 1926, с. 34.
13. Edmonds C. Kurds, Turks and Arabs. London, 1957, p. 144.
14. Longrigg S. Iraq. 1900-1950, London, 1956, p. 244; Edmonds C. Kurds, Turks and Arabs, p. 144.
15. Edmonds C. Kurds, Turks and Arabs, p. 245.
16. Նույն տեղում, էջ 314:
17. Оганесян Н., указ.соч., с. 203.
18. Ключников Ю., Сабанин А., указ.соч., с. 310.
19. The Ambassador in Turkey to the Foreign Ministry. 3.VI.1941 – Documents on German Foreign Policy (DGFP). 1918-1945. Series D. (1937-1945), vol. XII, London, 1962, p. 953.
20. См. Оганесян Н. Политика империалистических держав на Арабском Востоке в годы Второй мировой войны (1939-1945гг.), Ереван, 1980.
21. DGFP. Serics D. vol. XIII, London, 1954, p. 82.
22. Նույն տեղում:
23. Նույն տեղում, էջ 83:
24. The Ambassador in Turkey to the Foreign Ministry. 9.VII.1941- DGFP. 1918-1945. Series D. vol. XIII, p. 106.
25. The Foreign Ministry to the Embassy in Turkey. 12.VII.1941, DGFP, 1918-1945. Series D. vol. XIII, p. 123.
26. Նույն տեղում: